ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՔԱՂԱՔԻ
Գ. ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ № 1 ՀԻՄՆ. ԴՊՐՈՑ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРАРАТСКАЯ ОБЛАСТЬ г. ВЕДИ
ОСНОВНАЯ ШКОЛА №1 им. Г. МАРГАРЯНА

0601 թ. Վեդի, Կոմիտասի 9
հեռ. (0234) 2-41-80

Индекс: 0601 г. Веди, ул. Комитаса 9
тел: (0234) 2-41-80

27.01.2023թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «Վեդի քաղաքի Գագիկ Մարգարյանի անվան №1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի <<Հայոց եկեղեցու պատմության>> (15 դասաժամ), <<Կերպարվեստ>> (9 դասաժամ), <<Մաթեմատիկա>> (10 դասաժամ), ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 25.01.2023թ-ից մինչև 07.02.2023թ-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 16:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023թ. փետրվարի 9-ին՝ ժամը 12:00-ին**, ՀՀ Արարատի մարզի Վեդի քաղաքի Գագիկ Մարգարյանի անվան №1 հիմնական դպրոցում, հասցե՝ ՀՀ Արարատի մարզ, քաղաք Վեդի, Կոմիտասի 9:

Տեղեկությունների համար զանգահարել 0234 2-41-80 հեռախոսահամարով:

ՏՆՕՐԵՆ /Ա. ՊԱՊՈՅԱՆ/